Արձանագրություն N 3

<<ԱՀԳՀԱՊՁԲ-19/9>>ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

գ.Ախուրյան

<<06>> <<մայիսի>> 2019թ.
ժամը 14:00

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, քարտուղարը ,գնման մասնակիցները և նրանց ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հայտարարեց նիստի բացման մասին:

1. <<ԱՀԳՀԱՊՁԲ-19/9>>ծածկագրով գնման հայտերի բացման նիստը անցկացվում է << Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում, Ախուրյանի համայնքապետարանի երկրորդ հարկի N11 սենյակում:Գնման առարկա է հանդիսանում **բարձր խտության պոլիէթիլենային խողովակների և կոմպրեսիոն կցամասերի ձեռք բերումը,որը կազմակերպվել է 15 չափաբաժիններով**:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է երեք հայտ, ըստ գնահատող հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան.

N	Մասնակցի անունը	Մասնակցի հասցեն	էլ.փոստ
1.	<<էկոմիքս>>ՍՊԸ	Ք.Երևան,Ա.Բաբաջանյան 60/2	tenders@360shinbaza.am
2	<<ՎԱԳԱՐԹ>>ՍՊԸ	Ք.Երևան,Գարեգին Նժդեհ 16 51/1	tarthur@inbox.ru
3	<<ԱՌԳ ԳՐՈՒՊ>>ՍՊԸ	Ք.Երևան,Դավթաշեն 1-ին թաղամաս,5/14	orggroup65@mail.ru

3. **Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

<<ԱՀԳՀԱՊՁԲ-19/9>>ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացրած բոլոր հայտերը կազմված էին գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացրած բոլոր փաստաթղթերը կազմված էին բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

4.Նիստին ներկա անդամների և գնման մասնակիցների համար հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հրապարակվեց հրավերի պահանջներին համապատասխանող մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:2,8,10,11,12,13,15 չափաբաժինների համար մասնակիցների առաջարկած գները բարձր էին տվյալ ապրանքների նախահաշվային գներից,ուստի առաջարկվեց մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ,գների նվազեցման շուրջ:Բանակցությունների արդյունքում <<ԱՀԳՀԱՊՁԲ-19/9>>ծածկագրով գնման ընթացակարգը կայացավ 1,2,3,4,5,6,7,8,9,10,12,14 չափաբաժինների մասով,իսկ մնացած՝ 11,13,15 չափաբաժինների մասով՝ համարվեց չկայացած:

5. **Մասնակիցների գնային առաջարկները՝**

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը	Նախահաշվային գինը	<<էկոմիքս>> ՍՊԸ /առանց ԱԱՀ/	<<ՎԱԳԱՐԹ>> ՍՊԸ /առանց ԱԱՀ/	<<ԱՌԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ /առանց ԱԱՀ/
1	Խողովակ պոլիէթիլենային Φ 75մմ	1045000	1070666	1360000	1038354

2	Խողովակ պոլիէթիլենային Փ 50մմ	547300	590416	723500	585542 /բանակց.արդյունքում 547300/
3	**Խողովակ պոլիէթիլենային Փ 32մմ**	**295900**	**262166**	**309800**	**242458**
4	Անցում մետաղականից պոլիէթիլենայինի Փ50մմ	4000	3913	12750	-
5	Եռաբաշխիչ Փ/50*32*50/	64000	49733	31400	-
6	կցորդիչ/մուֆտ/Փ50մմ	31050	21050	15350	-
7	կցորդիչ/մուֆտ/Փ75մմ	60000	84440	30230	-
8	խցանՓ50մմ	1200	2335	2150/բանակց.արդյունքում 1200/	-
9	խամուտՓ75մմ-Փ32մմ	80000	68133	-	-
10	խցանՓ75մմ	2400	10935	4200/բանակց.արդյունքում 2400/	-
11	Ջրագծի հորի պոլիէթիլենային կապարիչ օղակով	125000	174933	-	-
12	խամուտ Փ/110-50/մմ	8400	8685/բանակց. արդյունքում 8400/	-	-
13	սողնակՓ75մմ	36000	43410	-	-
14	սողնակՓ50մմ	30000	24720	-	-
15	խամուտ Փ/150-50/մմ	9000	13535	-	-

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջներին համապատասխան բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց և հայտարարեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

<<ԱՀԳՀԱՊՁԲ-19/9>>ծածկագրով գնման ընթացակարգի 1,2,3 չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ընտրվեց **<<ԱՌԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ** -ն, 5,6,7,8,10 չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ընտրվեց **<<ՎԱԳԱՐԹ>> ՍՊԸ** -ն , 4,9,12,14 չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ընտրվեց **<<Էկոմիքս>> ՍՊԸ** –ն, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:Ապրանքների մատակարարումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով այլևս անհնար է,գնահատող հանձնաժողովը որոշեց,որ **<<ԱՀԳՀԱՊՁԲ-19/9>>**ծածկագրով գնման ընթացակարգը 11.13.15 չափաբաժիններով հայտարարել չկայացած և << գնումների կազմակերպման մասին N 526-Ն որոշման 23-րդ կետի համաձայն տվյալ չափաբաժինների ապրանքների գնումը կատարել մեկ անձից:

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ, ձայներով:

2.Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակում է հայտերի բացման նիստի արձանագության,շահերի բախման բացակայության մասին հայտարարության և հայտերի գրանցամատյանի բնօրինակներից արտատպված տարբերակները: << կառավարության 2017 թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով, էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին:Էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ներկայացվող առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ եզրակացության և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը, 14.05.2019թ.-ին հրավիրել հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը:

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ, ձայներով:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները,ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյան

անդամներ՝ Ռուբիկ Քաբաբյան

Արա Ղանդիլյան

քարտուղար՝ Անահիտ Յավրումյան